«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 98 546 497, +374 93 012 015
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT08-2608-V (1108)
**«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 8-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի առցանց նիստի**

| | |
|---|---|
| Քվեարկության սկիզբ՝ | 06 օգոստոսի, 2026 թ. |
| Անցկացման ձև՝ | Առցանց հարցում |
| Քվեարկության ավարտ՝ | 11 օգոստոսի, 2026 թ. |

**ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**
Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝

Սարգիս Բաղալյան - ՀԽ նախագահ,
Արամ Կայֆաջյան,
Հայկ Եգանյան
Հակոբ Պետրոսյան
Ջուլիետա Կճանյան,
Ռուբեն Հարությունյան,
Վազգեն Յակուբյան,
Տիգրան Բունիաթյան,
Ռաֆֆի Ֆըսթըգճյան:

Նիստին չեն մասնակցել՝

Աշոտ Մկրտչյան,
Տիգրան Հարությունյան:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամից ինը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:
Նիստի քարտուղար ընտրվեց Էլլա Ավագյանը:

**Հարց 1. (Արտերկրից Հայաստան տեղափոխված հայ ընտանիքների երեխաների համար 1-9-րդ դասարաններում հատուկ ընդունելություն սահմանելու առաջարկ):**

**Որոշում՝ հարց 1:**
Որոշվեց հաստատել հատուկ ընդունելության նախագիծը արտերկրից Հայաստան տեղափոխված դիմորդների համար, մասնավորապես՝

1. Արտերկրից Հայաստան տեղափոխված հայ ընտանիքների երեխաների համար հատուկ ընդունելությունը գործում է միայն «Այբ» դպրոցի 1–9-րդ դասարաններում:
2. Հատուկ ընդունելությանը կարող է մասնակցել այն դիմորդը, որը միաժամանակ՝
   ա) ունի առնվազն մեկ հայ ծնող,
   բ) Հայաստան է տեղափոխվել դիմելու օրվան նախորդող 7 ամսվա ընթացքում,
   գ) Հայաստան տեղափոխվելու պահի դրությամբ առնվազն վերջին 12 ամիսների ընթացքում հանդիսացել է արտերկրի հանրակրթական դպրոցի առկա ուսուցմամբ աշակերտ:
3. Հատուկ ընդունելության համար օգտագործվում են արցախցի սովորողների համար յուրաքանչյուր դասարանում լրացուցիչ նախատեսված երկուական տեղերից միայն այն տեղերը, որոնք չեն համալրվել կամ ազատվել են:
4. Դիմորդներն անցնում են դպրոցի ընդունելության կարգով նախատեսված գնահատումը և պետք է հաղթահարեն սահմանված բավարար շեմերը: Ընդունելության կարգի դրույթների միջև հակասությունների կամ կարգով չկարգավորված հարցերի վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է Ընդունող հանձնաժողովը:
5. Եթե հատուկ ընդունելության դիմորդների թիվը գերազանցում է առկա տեղերի թիվը, մրցույթն անցկացվում է միայն հատուկ ընդունելության դիմորդների միջև:
6. Հատուկ ընդունելությամբ ընդունված սովորողների համար գործում է դպրոցի ընդհանուր ուսման վճարը:
7. Երեխայի կրթական կարիքներից ելնելով՝ դպրոցը կարող է առաջարկել հավելյալ կրթական կամ ինտեգրման ծրագիր: Հավելյալ ծրագրի համար դպրոցի տնօրենությունը կարող է սահմանել լրացուցիչ վճար:
8. Դպրոցի տնօրենությունը, հիմնվելով մասնագիտական կարծիքների վրա, կարող է չստորագրել ուսումնառության պայմանագիր, եթե գտնում է, որ դպրոցը չի կարող տվյալ երեխայի համար առաջարկել իրատեսական հավելյալ կրթական կամ ինտեգրման ծրագիր, կամ եթե առաջարկված ծրագիրն ընդունելի չէ ծնողների համար:

Որոշումը կայացված է միաձայն:

ՀԽ նախագահ

Սարգիս Բաղայան _____

Նիստի քարտուղար

Էլլա Ավագյան _____